1843 — ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ — 1902


ԵՐԻՄ. Հ. Ս. — Ցաւա՞չ . . . . . 1
Մ. ՇՈՎՐԵԱՆ. — Մատենագրական . . 6
ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Այլասերում . . . 15
ՕՍՍԻԱՆ. — Փինգալ. Թրգմ. Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ . . . . . . 19
Հռոմայ աւարառութիւնը Գոթաց ազգէն 410 տարւոյն մէջ . . . . . 25
ՁՐԱՔԵԱՆ Հ. Ք. — Ստեփանոս Նազարեանց . 402
H. F. B. LYNCH. — Աղիքսանդրապօլ Թրգմ. ՍԱՐԵԱՆ Հ. Ս. . . . . . . 33
Ա. ԳՈՑԻԹՈՑ. — Ներոն. Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ . . . . . . . 38
ԵՐԻՄ. Հ. Ս. — Հաջորդ Համարին. . 47


## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Կիլիկիոյ Կաթողիկոսընտրուեր է Ամէն. Տ. Գէորգ Եպ. Երիցեան: Հայ. Եկեղեցւոյ ուսեալ և բարեկիրթ անդամներէն է. և կը համարուի արժանաւոր այդ բարձր պաշտօնին:

2. Փարիզու Ասիական ընկերութեան կանոնին մէջ Բանասէր Թերթի խմբագրապետ Կ. Բասմաջեան, Բնաշխարհի Մագկերտ գաւառի Գըզըլ Գալէ կոչուած տեղը գտնուած վանեան արձանագրութեան մը մասին ճառեր է:

3. Բագուցի Գ. Թումանեանց Կ. Պոլսոյ Ազգային Հիւանդանոցին 3000 ֆր. նուիրած է:

4. Բարձրաստիճան Գեր. Գ. Եպսկ. Իւթիւճեանի միջոցով Մարսէյլի մէջ. կարնոյ ներկայ ազգային արկածելոց համար 1000 ֆր. հանգանակուեր է: Այս կարօտեալ ազգայնոց նոյնպէս օգնութեան հասեր են Երզնկացիք, Տրապիզոնցիք, Մանիսացիք, Իզմիրցիք և Երուսաղեմայ Պատրիարք սրբազանը:

5. Մանչեստրէն Մարտիրոս Թագւորեան, ազգային մանկաւոյ վաճառականութեան և գիտական ուսմանց վարժարան մը բանալու համար մտադիր է(՞) 2000 ոսկի նուիրելու. ցանկալի է որ շուտով փափաքը կատարուի և գանէ նոյնպիսի վարժարանի մը համար ձեռնհաս և վստահելի վարչութիւն մը:

## ՆԱՄԱԿՆԵՐ ԱՌ «ԲԱԶՄԱՎԷՊ»

Թ ԱՎՐԷԺԷՆ. — Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Միացեալ Ընկերութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնել պատուարժան խմբագրութեանդ, որ Թաւրիզում գոյութիւն ունեցող երկու Հայուհեաց Ընկերութիւնները անքակտելի պայմաններով հաստատեցին այն ցանկալի միութիւնը, որ տարիներից ի վեր մտածութեան առարկայ էր եղել և զբաղեցնում էր ազնիւ և խաղաղասէր անձանց մտքերը: Անջատ ուժերի միացմամբ Վարչութիւնս լիայոյս է վայելել աւելի առատօրէն Հայ ազգի սէրն ու վստահութիւնը: Միացեալ Ընկերութիւնն իւր գործունէութեան ասպարէզն ընդարձակելու է, որչափ առատ վայելէ Հայ ժողովրդի և բարեգործ անձանց նիւթական ու բարոյական օժանդակութիւնները: Եւ արդէն բացի Թաւրիզում պահած հաստատութիւններից, Միացեալ Ընկերութիւնը ներկայ ուսումնական տարեշրջանի համար ունի Ատրպատականի խուլ ու խաւար անկիւններում 9 հատ գիւղական ուսումնարաններ արական սեռի, երեք հատ էլ իգական սեռի համար, որոնք ունին իրենց յատուկ ուսուցչուհիներ: Այդ ուսումնարաններից՝ Թրքախօս Բարանդուզի Դեյլա – Թափէ և Բաքառու գիւղերի երկսեռ ուսումնարանները պահուելեն Մի Բարերարի հաշւով. Երկուսը՝ Մեծ. պ. պ. Ալեքսան Մելիք Ազարեանի և Ստեփան Տէր Օհանեանի մշտական նպաստներով. իսկ մնացեալ վեց ուսումնարաններն պահուելեն Ընկերութեան աղքատիկ Միջոցներով: Միայն խնդիր է թէ ինչ չափով և որչափ ժամանակ Ընկերութիւնը պիտի կարողանայ շարունակել իւր բազմօգուտ գործը, քանի որ Ընկերութիւնը չունի դրամագլխի բաւականաչափ հասոյթ, որպէսզի գործը անխափան առաջ տանի: Ազգիս Վեհափառ Կաթողիկոս՝ գնահատելով երկու Ընկերութեանց միացումը, Բարեհաճեց իւր Հայրապետական օրհնաբեր կոնդակով հաստատել ցանկալի Միութիւնը, խոստանալով ի դէպս իւր Հայրական աջակցութեան շնորհն չ'զլանալ Ընկերութեան յառաջդիմութեան համար: Եւ արդէն մասամբ յայտնի պիտի լինի յարգելի Հայ հասարակութեան որ՝ Ընկերութիւնս Պարսկաստանում գտնւում է ընդ հովանաւորութեամբ Արեգակնափայլ Շահն – Շահի, Նորին Արքայական բարձրութիւնից տրուած «Ֆիրմանով»:

ՆԱԽԱԳԱՀ՝ ՍՐԲ. ԱՄԱՏ.

Կրթասէր և ուսումնասէր բարերարաց ընկատողութեան կը յանձնենք այս նամակը. օգնել կրթական եռանդուն գործիչներուն, նուիրական պարտք մ'է:

ԽՄԲ. ԲԱԶՄ.

Ս ԱՐԻՆԷՆ. (Խրիմաշարժ): Ահա 24 օրեր անհու դողի մէջ ենք, ամենայն ինչ դադար առեր է: Հարուստն և աղքատն հաւասարապէս անգործութեան դատապարտուած և որ չարագոյնն է՝ մահու և կենաց սոսկալի և դժնդակ պայքարին


ՄԵՐ ՀԱՍՑԷՆ Է RÉDACTION DE LA REVUE "PAZMAVEB„
St. LAZARE VENISE (ITALIE)


digitised by A.R.A.R.@

մէջ կը գտնուինք։ — Մեզ կարնեցւոցս համար Հոկտեմբեր 27 սեւ չարագուշակ եղաւ։ Առաւօտը ժամը 1/2ին ըստ արեւելեան, երբ ամէն ոք հանգիստ իրենց բնակավայրին մէջ կը ննջէր, յանկարծ ակնթարթի մը մէջ սոսկալի շարժում մը սկսաւ սոսկալի գոռումով մը, մեր տան ամէն միայն բերանէն ելաւ աղաղակ/ տարափանաց ճչումն՝ բոլոր որմերն, տանիք և գետին դողահար էին. վայրկենական բնազդըն ամէն մէկս դէպ ի փողոց ձգեց, ուր վայեր, ողբեր, կանչիւններ, դեղնահար դէմքեր, կուրծքը կոծող բազուկներ, յուսահատ կ'ընէր զմարդ ի կենաց։

Ոչ արդ ոչ զարդ կը փնտռէինք այլ եւս միմեանց վրայ. մին կիսամերկ, միւսն գլխաբաց, ուրիշ մը բոպոտն, այլ ոք վերմակով պատատուած կը կենար, հասարակաց էր ահաւոր տարտափը, վայելչութիւն ոչ ոք կրնար պահանջել։ Երբ հազիւ սակաւ մը դադար առաւ երկրաշարժն, ամէն ոք սակաւ ոգի առած կը ջանար յիշողութիւնը ամփոփել և իւր շուրջը փնտրել իւր սիրելին, իւր դրացին, իւր մտաւորը։ Ամէն ոք լսած կամ տեսած կը յիշէր 42 տարի առաջ հանդիպած երկրաշարժը, զոր տեղացիքս մեծ ժամի տարի անուամբ գիտենք և որ մեծ թուականի մը կերպարանքն առեր է փոքր տարուան նման մեր պառաւանց բերանը։ Այս ժամը բոլորովին նախընթացին համանման էր։ Ցուրտը կը ստիպէ զմեզ դառնալ մեր տները, բայց ներսը փլատակաց կոյտեր կը գտնենք. պատերու և տանիքներու ճեղքուածք յետս կը կասեցնեն զմեզ, նա մանաւանդ փոշիներու ամպ մը արգելք կ'ըլլայ ներս մտնելու, որով ստիպուած կը բանագատուինք մնալ բացօթեայ։ Ահա այս վիճակնուս մէջ կը կրկնէ շարժը սաստիկագոյն կերպով, ամբողջ տուներ՝ փլատակներ կը դառնան։ Ժողովրդեան գոռում գոչումն կը տիրէ ամէն կողմ։ Ջերմեռանդներ կը դիմեն եկեղեցի, ապաճար. բայց նոյն տեղերն ալ անբնակելի և երկիւղալի դարձեր են այլ եւս յուսաբեկ զարհուրելի աւայներով շատեր կը փռուին գետնի վրայ, որոնց ջերմութեան և ծանրութեան ներքեւ ձիւներ կը հալին և կը տառեցնեն իրենց վրայի դժբաղդները։ Ողորմելի վիճակ։ Չկայ տուն մը, որ վնասուած չըլլայ, ինչպէս նաեւ աղօթատեղիք և վարժարանք գրեթէ ամենքն ալ անգործածելի դարձան։ — Տեղական իշխանութիւնը կը փութայ զինուորաց օգնութեամբ վրաններ զարնել տեղատարափ ձիւնէն և ցրտէն պատսպարելու համար։ Փութով յանձնաժողովներ կը կազմին օգնելու համար աղքատներուն. Տէրութիւնը կ'աճապարէ դրամով և ամէն դիւրացուցիչ միջոցներով հայթայթել հաց և տախտակէ խրճիթներ։ Գերեզմանոցներն վրանաբնակներու տեղի կը դառնայ։ Սուրբ Նշանի տաճարին վրայ կը բարձրանան ու ժամանակեայ փայտեայ անակներ, ինչպէս նաեւ ի Զարդարան և Սեւ Ջրոյն բոլորտիքը։ Կորուստներս ոչ միայն շէնքերու, այլ և մարդկանց ալ եղաւ։ Հիւանդութիւնը պակաս չէ մանկանց մէջ, մանաւանդ կարմրախտը և փողացաւը։ Մահը շատեր կը հնձէ։

Սակաւ գաղափար մը ձեւացնելու պատճառաւ, Ձեզ համար կը ճարեմ նամակովս աւերակներու մի քանի լուսանկարքը*։ Պետութիւնը այժմ մահմետականք՝ որոնց չքաւեց խրճիթներ՝ կը ցրուէ մահմետական մերձակայ գիւղերու մէջ, իսկ քրիստոնեաներն ալ քրիստոնեայ գիւղօրէից մէջ և օրուան ոգեպահիկի համար ամէն մի անձի կը վճարէ 20 փարայ։ Աղքատը այսպէս հազիւ պիտի ապրի, հարուստը իւր դրամովը կը տոկայ, ամենէն թշուառքը են միջին ընտանիք, որոնցմէ ոչ սակաւներ մեծ ամօթով մը և կորանքով ձեռքերնին բարերարաց կը կարկառեն։ Շատ տխուր և ցաւալի պայման։ Այժմ կը գտնուիմ 15 օրեր բոլորովին պարապ անցնելէս վերջը՝ մագազայիս մէջ, որ միջնաբերդին նոր աւերակաց դիմացն կանգուն կայ միայարկ. Ներքսակողմը տեղական իշխանութիւնը ընտանեաց պատսպարան ըրեր է. իսկ ես բանագատուած պատուհանին առջեւ արհեստիս գործիք և նիւթք մի կողմ ամփոփելով կը գրեմ այս տողերս։ Ոտիցս ներքեւ կը լսեմ կրկին կրկին շարժումներ. ո՜հ երկինք մեզ համար պղինձ դարձեր է, ողորմութիւն հայցեցէք Ձեր մաքուր աղօթներովը... գուցէ վերջին գրութ...

Նոյեմբեր 26 ՍՏԵՓԱՆ

* Առաջիկայ «Գեղունի»ի մէջ պիտի հրատարակուին։

ԽՄԲ.

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

Հրապարակաւ շնորհակալութիւննիս կը յայտնենք ռուսահայ գրագէտ Գ. Ե. Շահազիզի և փարիզաբնակ նկարիչ Գ. Ս. Քիւրքճեանի որոնք «Գեղունի»ի համար, ազնուութիւն ունեցան մեզ յղելու մի քանի հեռաքըրքրական լուսանկարներ։

## Ա. Զ. Դ.

Մխիթարեան Միաբանութեան յոբելեանին առթիւ, ընդ ամէնն ստացուած է 10,084 ֆր. նուէր. Նուիրատուաց անունները հրատարակուելիք ցիշատակարանին թերթին մէջ պիտի արձանագրուին։

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«ԲԱԶՄԱՎԷՊ»ի Տարեկան Գինն է կանխիկ 10 Ֆր.

digitised by A.R.A.R.@